ՆՈՐ-ԴԱՐ

№ 207 ՔՍԱՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ երեքշաբթի 18 Նոյեմբերի, 1903 երեքշաբթի 18 Նոյեմբերի, ՔՍԱՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 207

Տարեկան 10 բուբ. վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը 3 բ. 50 կ.
ամիսը՝ (Թիֆլիսում) 1բ., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը՝ Դավիդով. փողոց № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ Даръ» կամ Tiflis Redaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

Ամսոյս 15-ին կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց

Մարիամ Ստեփանեան Ծովիանեանը,

որի մասին ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի որդիքը. Գէորգ Աղէքսանդրեան Ծովիանեանը, Մարիամ-Աղէքս. Ենիկոլոփեան, Սոֆիա Աղէք. Տ-Յովհաննէս, Նատալի Աղէք. Մայսուրեան և իշ. Հեղինէ Աղէք. Դուրամովան։

Ամբիծքը երեքշաբթի երեկոյեան ժամի 7-ին. իսկ թաղումը չորեքշաբթի առ. ժ. 10-ին դէպի Մոդնուց ս. Գէորգ եկ. իսկ այնտեղից յօշխանի վերհսմանատունը։

(332) 1—1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Վաճառականական ուսման կարեւորութիւնը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Մոսկուայից, մեծ Սալայից. Թոփսի գիւղից։
Տպաւորութիւններ Բագուի մի օրուայ վիճակագրութիւնից։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւն.—Մոսկուայից Նամակ Ծարագոյն—Աբեկլքից։
Քաղաքական.—Երէյֆուսի գործի վերջնորոշութիւնը. Մակեդոնացի քրիստոնեայ ժողովրդի վիճակը. Նոր թեկնածուներ—Թիբէթեան արշաւանքն և անգլիական մամուլը,
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Բանաւորական.—Ջուն ու կառուց։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս 16-ն Նոյեմբերի 1903

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կովկասեան առևտրական աշխարհը եթէ ուրիշ երկրների վերաբերութեամբ չունի շատ մեծ առաւելութիւններ, գոնէ անանկութիւնների կողմից կարող է պարծենալ որ ինքը վերջին տեղը չէ գրաւում

Անանկութիւնները, որոնք սովորական երևոյթների շարքն են անցել, մի տեսակ մոլի կերպարանք են ստացել և կորստաբեր կերպով են ազդում երկրի ընդհանուր զարգացման վրայ, առաջանում են մի քանի արմատական պատճառներից։

Ըստուով հարստանալու և միլիոնների տէր դառնալու տենդը համաճարակի բնաւորութիւն է ստացել Կովկասեան առևտրական դասի համար։ Դրա պատուաւոր անդամները իրենց գոյութեան այդ նպատակին հասնելու համար, կանգ չեն առնում ոչ վարկաբեկ լինելու, ոչ երկար ու բարակ, մանաւանդ ապատ դատավարութիւնների և ոչ էլ ուրիշի սեփականութեան վրայ «սլինդ նատելուց» առաջացած խղճի խայթի առաջ։ Այս օրուայ հարիւր հազարների շրջանառութիւն կատարող վաճառականը, վաղը անանկ է հրաժարակում իրեն և անկարող իր պարտքերը վճարելու։ Վիճակի այդքան յանկարծական փոփոխութեան մէջ, եթէ նա արդիւնք չէ հրդեհի, նաւաբեկութեան և կամ դրանց նման արտակարգ խոշոր պատճառների, անկասկած, շատով հարստանալու փափագը ահագին տեղ ունի գրաւած։ Եւ ցաւելով պէտք է ասել, որ այդ պղտոր ակբիւրից բղխող անանկութիւնները բաւական յաճախ են պատահում Կովկասեան առևտրական աշխարհում, մանաւանդ վերջին 5-10 տարուայ ընթացքում։

Վաճառականին անանկութեան հասցնող երկրորդ տեսակ պատճառներն են այն փոքրանքները, որոնց վոհ են գնում այս կամ այն առևտրականի տասնեակ տարիների ընթացքում ձեռք բերած վաստակն ու արած խնայողութիւնը միանգամայն անկախ ու հակառակ նրա կամքի։ Այդ կարգի պատճառների տակ պէտք է հաշուել, բացի բնական արհաւիրքներից, նաև այն առևտրական կապերը, որոնց շնորհիւ առևտրական հրապարակի մէկ կամ մի քանի ներկայացուցիչ բացարձակ անկարողութեան է մատնւում իր պարտատէր այս ինչ կամ այն ինչ հիմնարկութեան անանկանալուց։

Սակայն, այս երկու հիմնական պատճառներից զատ, կայ և մի երրորդը, որը յաճախակի հրապարակ եկած առևտրական անկարողութեան դէպքերի մէջ նուազ կարևոր դեր չէ խաղում։ Այդ երրորդ տեսակ պատճառը մենք համարում ենք վաճառականական արհեստի վերաբերութեամբ մեզանում տիրող անտարբերութիւնն ու անտեղեակութիւնը, որոնք, ձեռնարկութեան յաջողութեան տեսակէտից կենսական նշանակութիւն ունենալով հանդերձ, խոտան շատ դէպքերում ուշադրութիւնից բաց են թողնւում ինչպէս խոշոր, նմանապէս և մանր ձեռնարկութիւնների մէջ։

Վաճառականութիւնը իր բազմաթիւ ստորաբաժանմունքներով, որպիսիքն են, հաշուապահութիւն, դիտութիւն ապրանքների տեսակների ու արժէքների մասին, գրամական շրջանառութիւն, գիտութիւն ներքին ու արտաքին փոխնակագրերի ու արժեթղթերի մասին, վաճառականական օրէնսդիտութիւն, այլն, այլն, այսօր ներկայանում է բոլորովին ինքն ուրոյն ու բարդ մի գիտութիւն։ Գործի յաջողութիւնն ու անտեղի կորուստներից ազատ լինելու պահանջը ամեն մի վաճառականի վրայ պարտք է դնում այդ հրապարակը ոտք կոխել վաճառականական դիտութիւնը լաւ ուսումնասիրելուց և իւրացնելուց յետոյ միայն։ Մեր մէջ այդ հիմնական օրէնքին շատ քչերն են հետևում, և հէնց այդ պատճառով էլ առևտրի այս կամ այն ճիւղի մէջ շատ անգամ հրապարակ են գալիս այնպիսի մարդիկ, որոնք իրենց սկսած գործի մասին տարրական ծանօթութիւն անգամ չունեն։ Պատահում են դէպքեր, ուր վաճառականական գիտութեան անտեղեակ անհատներ կարողանում են որոշ չափով յաջողութիւն գտնել իրենց ձեռնարկութեան մէջ, սակայն, այդպիսինները շատ փոքր թիւ են կազմում, իսկ մեծամասնութիւնը գոհ է գնում իր յանդուգն յանձնապատասխանութեան, սովորաբար ժամանակի մէջ գրկուելով ձեռքն ունեցած դրամագլխից։

Թողնենք վաճառականական գիտութեան մանրամասն ուսումնասիրութիւնը մի կողմ, որից ամենամեծ հիմնարկութիւնները անգամ զուրկ են, խոտան չնչին բացառութեամբ, մեր առևտրական հաստատութիւններից շատերը իրենց գործառնութեան ընթացքում ամէնօրեայ ու անտեղի ծախս են համարում կանոնաւոր հաշուապահութիւն անգամ, որ վաճառականական արհեստի ամենաէական պահանջն է։ Մեր առևտրական դասի ներկայացուցիչների մէջ ստուար տոկոս են կազմում այնպիսինները, որոնց ունեցած տեղեկութիւնը իրենց գործունէութեան վիճակի մասին միշտ էլ մօտաւոր է և տարեկան ահագին վնասների են ենթակայ հաշուապահութեան բացակայութիւնից և կամ նրա խառնաշփոթ դրութեան մէջ գտնուելուց։

Հայ վաճառականները շատուեակ պէտք է և անտեղի անանկութիւնները անպակաս պէտք է լինին նրանց միջից մինչև այնքան ժամանակ, որքան նրանք անփոյթ վերաբերուեն դէպի իրենց արհեստի պահանջած գիտութիւնն ու ուսումը, որքան որ նրանք ոտք կոխեն վաճառականութեան այս կամ այն ճիւղը, առանց նրա նախապատրաստական ուսումը ձեռք բերելու։

Այդ նպատակին են նուիրուած վաճառականական ուսումնարանները, և լաւ վաճառական լինելու համար հարկաւոր է անպատճառ այդ բովից անցնել։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի կառավարչապետ գէներալ-ադիւտանտ Իշխան Դ. Ս. Դոլգորուկի հիւանդութեան վերջին երեք օրուայ բիւլլետենները.

Նոյեմբերի 14, երեկոյեան ժամը 8.—Գիշերը նորին պայծառափայլութիւնը քնած էր ընդհատումներով։ Ցաքութեան տատիճանն առաւօտեան 37,3 էր, երեկոյեան 38,7։ Սրտի զարկը 76։ Վրի յետին մակերեսի վրայ երևան է եկել նոր բորբոքում փոքր տարածութեան վրայ։

Նոյեմբերի 15, երեկոյեան ժամը 8.—Ցաքութեան տատիճանն առաւօտեան 38,0 էր, երեկոյեան 37,9. Սրտի զարկը 68. Ինքնագգայողութիւնը գոհացուցիչ է։ Բորբոքումը տատանափոխւում է հրեակ մաշկի վրայ բռնուած փոքրիկ տեղով։

Նոյեմբերի 16. երեկոյեան ժամը 8.—Ցաքութեան տատիճանն առաւօտեան 36,8 էր, երեկոյեան 37,8։ Զարկերակը 66. Ընդհանուր դրութիւնը գոհացուցիչ է։ Բորբոքումը բռնում է մաշկի վրայ նոյն տեղը

— Ս. Մարիամ Մագդալինէի Թիֆլիսի ընկերութեան հիմնադիրները առաջիկայ տարուայ գարնան մատղիք են ընդհանուր ժողով գումարել վարչութիւն ընտրելու և ընկերութեան գործունէութիւնը սկսելու համար։ Ընկերութեան կանոնագրութիւնը, ինչպէս յայտնի է արդէն հաստատուած է։

— Թիֆլիսում շուտով բացուելու է ռուսաց պաշարժութեան Կայսերական ընկերութեան Անդրկովկասի ճիւղը։

— Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան կից կազմուած էր մի առանձին յանձնաժողով քննելու համար երկրագործութեան և պետական կալուածների մէնիտուրեան մէջ մշակուած օրինագիծը գինու կեզծման դէմ ձեռք առնելիք միջոցների մասին։ Այս օրերս յանձնաժողովը վերջացրել է իր աշխատանքները, և շինել օրինագծի մասին հրա կազմած ընդարձակ դեկուցումը պիտի քննուի դիւղատնտեսական ուսումնարանի ներքո, և լաւ վաճառական լինելու համար հարկաւոր է անպատճառ այդ բովից անցնել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՈՒՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

(Հնդկական առասպել)

Վ. Դորոշևիչի

Բամբէյի մօտ երկու խարոյկ վառուեց։

Այդ խարոյկներից ծխի մախրապոյն սիւներ բարձրացան դէպի երկինք։

Ծխի սիւներից դուրս եկան երկու մարդ ապիտակ հագուստով և կանգնեցին Բրահմայի գահի առաջ։

Ձսրեցին և գլուխ տուին։

— Ողջոյն ձեզ, ձեր ճանապարհորդութիւնը վերջացած ուղորդներ, — ասաց նրանց Բրահման։

Եւ դիմելով մէկին, հարցրեց՝

— Ինչից մեռար դու։

— Ես մեռայ վէրքից,—պատասխանեց մարդը,—և այն բանից, որ վէրքս ոչոք չկապեց։ Ես անցնում էի մի խուլ ճանապարհով ուր մարդ չկար, քաղաքում առած հաց էի տանում, ոտս քարի դիպաւ, վայր ընկայ, և կողքիս կապած դաշոյնը խրուեց մարմինս։ Ես ընկած էի և արնաքամ էի լինում։ Ահա այս մարդը դիպուածով անցնում էր մօտովս։ Կանչն առայ, նայեց, տեսաւ, որ արնաքամ եմ լինում, և վէրքս չկապեց։

— Ինչու վէրքը չկապեցիր,—գարմացած հարցրեց Բրահման միւս մարդուն։

Նա նայեց Բրահմային ապշած։

— Մեծ Աստուած, մի՞թէ չես տեսնում, որ դա գլխին մետաքսեայ շալմա ունի փաթաթած, իսկ իմ ճակատին կոր կարմիր բիծ կայ։

— Տեսնում եմ,—ասաց Բրահման,—բայց ուղորդի վէրքի հետ ինչ կապ ունի այդ։

Մարդն ուելի ևս ապշած նայեց Բրահմային։

— Դա փարս է, ես—կրակապաշտ։ Մի՞թէ կրակապաշտը կարող է օգնել փարսին։

Բրահման հարցրեց նրան՝

— Իսկ դու ինչից մեռար։

Կրակապաշտը պատասխանեց՝

Ես մեռայ սովից։ Ես անցնում էի յոգնած, ուժասպառ և, տեսնելով, թէ ինչպէս պա արնաքամ է լինում, վայր ընկայ դրա դիակի մօտ և մեռայ սովից

— Երբ դու վայր ընկար, հացերը թափուեցին, — հարցրեց Բրահման փարսին։

— Դա մեռաւ սովից իմ հացերի վրայ ընկած,—պատասխանեց փարսը։

— Ուրեմն ինչու դու չկերար այդ հացերից,—հարցրեց Բրահման կրակապաշտին։

Նա գլուխ տուեց և բարձրացրեց ճակատը, որպէսզի Բրահման կարողանար լաւ տեսնել կարմիր կլոր բիծը։

— Դա գլխին ապիտակ շալմա ունի, իսկ իմ ճակատին կարմրանեակ կարմիր բիծ կայ։ Մի՞թէ կարելի է, որ կրա կապաշտն ուտի փարսի հացը։

Բրահման մտածութեան մէջ ընկաւ և ասաց՝

— Դուք շատ էք տանջուել, ձեզ հանգստութիւն է պէտք։ Ես ազատում եմ ձեզ գոյութեան ծանրութիւնից։ Երկուսիդ էլ ապատում է վաստակաւորների պարգևը—մեծ լուս Նիրվանան։

Փարսն ընկաւ ծնկների վրայ և լաց եղաւ՝

— Ապրածների համար չկայ աւելի քաղցր պարգև, քան անէութեան հանգիստը։ Բայց մի՞թէ դու, մեծ Բրահմայ, որիդ ես պաշտում էի իբրև արդարութեան, մի՞թէ դու մեզ երկուսիս էլ պիտի ձգես միևնոյն Նիրվանայի մէջ։

— Նիրվանան մէկ է,—պատասխանեց ժպտալով Բրահման.—վաստակ շատ կայ, հանգիստը մէկ է։ Դոյութիւններ շատ կան, անգոյութիւնը մէկ է։

— Հապա ինչու այնքան շատ ճանապարհներ կան, եթէ նրանք բոլորն էլ տանում են դէպի միևնոյն հանգիստը,—բացականչեց սարսափած փարսը։—Ես ու դա դանագան կողմերը էինք գնում։ Ես ծաղիկներ էի բերում, դա կրակ էր վառում։ Թէ ծաղիկ բերողը և թէ կրակ վառողը պէտք է գնան միևնոյն Նիրվանան։ Այդ անկարելի է։ Ես միևնոյն ժամանակ չեմ կամենում դրա հետ միասին։

Բրահման դիմեց կրակապաշտին։

Նա նոյնպէս հակակում էր։

— Եւ մինչև անգամ գոյութիւն չունենալ ևս չեմ կամենում դրա հետ միասին,—արձագանքի պէս կրկնեց կրակապաշտը։

Բրահման նայեց սպետակ մետաքսեայ շալմա ունեցող մարդուն և ճակատի վրայ կարմրանեակ չբջան քաշած մարդուն։

— Ես տեսնում եմ,—ասաց Բրահման,—որ դուք մեռել էք, բայց ձեր յիմարութիւնը չի մեռել։ Նիրվանան ձեզ համար չէ։ Գնացէք գոյութեան ծանրութիւնը կրելու։

Եւ Բրահման նրանցից մէկին կատու դարձրեց, միւսին շուն։

Այդ ժամանակից ի վեր սպիտակ շալմա ունեցող մարդիկ և ճակատին կարմիր չբջան քաշած մարդիկ ծիծաղում են իրար հետ կռուող շան ու կատուի վրայ։

— Յիմար անասուններ։ ինչու են կռուում իրար հետ։

Մինչ դեռ իրենք ևս կռուում են իրար հետ։

ստատուն ընդունարան, որտեղ ընդունում էին միայն հիվանդներից վճարովի գումարներ, իսկ աղքատները ստանում էին անվճար։ Հիվանդանոցի տնօրենը ստիպված էր ամեն տարի հաշվետվություն տալ այդ գումարների ծախսման մասին։

— Ես ոչինչ չեմ հասկանում այդ հաշիվներից, — ասում էր նա, — ես միայն գիտեմ, որ հիվանդանոցի ընդունարանում ամեն տարի հավաքվում է 2,500 ռուբլի, իսկ ծախսվում է 3,000 ռուբլի։ Ուրեմն ինչպե՞ս կարելի է հաշիվները ճիշտ համարել։

Ընդունարանի հսկիչ Ֆոմինը, որ ծառայում էր 15 տարի, ամեն անգամ ստիպված էր լինում հաշիվները ուղղել, որպեսզի ամեն տարի ընդունարանում մնացորդ լինի։

— Ես ինչպե՞ս կարող եմ ուղղել, — ասում էր նա, — եթե ամեն տարի ավելի շատ հիվանդներ են գալիս, քան նախորդ տարի։ Ես ինչպե՞ս կարող եմ ստիպել, որ հիվանդները չգան։

Ֆոմինի ասելով՝ հիվանդանոցի ընդունարանում ամենից շատ հիվանդներ են գալիս Զատկի նախօրեին, երբ հիվանդանոցի բոլոր մահճակալները զբաղված են լինում։ Այդ ժամանակ հիվանդները ստիպված են լինում սպասել միջանցքում, մինչև որևէ հիվանդ առողջանա կամ մահանա։

Ընդունարանի հսկիչը պատմում էր, որ հիվանդանոցում ամենից շատ հիվանդներ են գալիս Զատկի նախօրեին, որովհետև այդ ժամանակ հիվանդանոցում ամենից շատ ուտելիք է լինում։

Ֆոմինի խոսքերից պարզ երևում էր, որ նա ամենևին էլ չի ցանկանում, որ հիվանդանոցում ուտելիքը շատ լինի։

Ընդունարանի հսկիչը պատմում էր նաև, որ հիվանդանոցում ամենից շատ հիվանդներ են գալիս Զատկի նախօրեին, որովհետև այդ ժամանակ հիվանդանոցում ամենից շատ ուտելիք է լինում։

Ֆոմինի խոսքերից պարզ երևում էր, որ նա ամենևին էլ չի ցանկանում, որ հիվանդանոցում ուտելիքը շատ լինի։

— Ես ինչպե՞ս կարող եմ ուղղել, — ասում էր նա, — եթե ամեն տարի ավելի շատ հիվանդներ են գալիս, քան նախորդ տարի։ Ես ինչպե՞ս կարող եմ ստիպել, որ հիվանդները չգան

ՀԱՅԿԱԿԱՆ ՎՈՒԱԾՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ս. Հարությունյան

Հայկական վաճառքի խոսքը գնդակ դարձավ, որ ամբողջ աշխարհում է թռչում։ Ամեն տեղ, որտեղ հայ կա, նա իր ազգային հատկանիշներով է աչքի ընկնում։ Հայ վաճառականը ոչ միայն ապրանքի որակով է հետաքրքրում, այլև ամենից առաջ ուզում է ծանոթանալ գնորդի հետ, նրա հոգեբանությունը ուսումնասիրել, նրա ճաշակին հարմարվել։ Հայ վաճառականը ոչ միայն ապրանք է վաճառում, այլև ինքն է գնորդին փնտրում

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ 17 նոյեմբերի

Վեքսելի կուրսը երեք ամսով.

Լոնդոնի վրայ	համար	93,75
Բերլինի	» 100 մարկի	» —
Պարիզի	» 100 ֆրանկի	» —

Վեքսելի կուրսը չէքերով

Լոնդոնի վրայ.	94,70
Բերլինի »	46,30
Պարիզի »	37,62½
Բարաային դիսկոնտը	5—6½%
4% պետական ռենտը. . . .	99½ սա
4% պետական փոխառութ. . .	—
4½% ներքին փոխ. 1893 թ. .	—
4% գրաւթղ. պետ. տկն. կալ. բանկի	95⅛
5% ներք. խաղ. փոխ. 1864 թ.	459 սա
5% ներք. խաղ. փոխ. 1866 թ.	348 սա
5% խաղ. գր. պետ. տկն. կալ. բանկի	294¼ սա
5% օբլ» թ.ֆ. քաղ. վարկ. ընկ.	—
½42% < » » » »	
5% » Թիֆլ. կալ. բանկի	—
6½% » » » » »	—
5% Բուհթախի կալ..	
6% » » » » »	
6% » Բագուի » »	
Ակցիաներ Բագուի նաւթ. ընկ.	440
» Կասպիան »	5125
» Մանթաշեան և ընկ.	236 սա
Փայեր եղբ. Նոբել	» 10800 սա
Ակցիաներ » » »	485

ԱՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔՂՂԱՊԱՏԱՆ

Երեքշաբթի, 18 նոյեմբերի, թատերասէրների խումբը կներկայացնէ

Բաղդասար Սդրար

կոմեդիա 3 գործ., հեղին. Պարոնեանի, փոխադրութիւն Սարգարեանի և Վրոյրի։ Մասնակցում են. օր. օր. Էմմա, Քնարիկ պ. պ. Ակեան, Գրիգորեան, Սրուանդեան, Ջանեան, Սահակեանց եւ Սիմոնեան։

Սկիզբն 8½ ժամին

Տեղերի գները. 1 բուբլուց մինչ 30 կ. հիւրերը մուտքի համար վճարում են 1 բուբլի

Ներկայացումից յետոյ

Պարեր

(331) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՁՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ռուսական օպերա

Անարեպրիզ Նորին Մեծութեան

Սոլիստ Ն. Ն. Ֆիգների։

Երեքշաբթի, նոյեմբերի 18-ին,

Ֆիգների և Զիրալդոնիի մասնակցութեամբ կներկայացուի

Պիկովայա Դամա

Օպերա 5 գործ, և 7 պատկերով, երաժ. Չայկովսկու։

Մասնակցում են՝ տ. տ. Դալցինա, Չեմասովա, Կարբի, Սելիւկ, Կալինինա, Լելինա, Սկարուպսկայա, պ. պ. Դարսակի, Իլիչչենկօ, Ամիրջան, Եալախով, Չմակով, Կիւղներ, Գրինեօվ, Թաւրիլով։

Գլխ. ռեժ. Բոգոլիւբով։

Կապելմայստեր Էսպոզիտօ։

Սկզբն է ժամը 8-ին երեկոյեան։

Ուղ.-Վաղը, չորեքշաբթի, նոյեմբերի 19-ին, կներկայացուի «Տրուբադուր»։ Հինգշաբթի, նոյեմբերի 20-ին, ներկայացում չի լինելու։ Ուրբաթ, նոյեմբերի 21-ին, Ֆիգների մասնակցութեամբ կներկայացուի «Ֆրա Դիաւոլո»։ Պատրաստւում է առաջին անգամ ներկայացնելու համար «Կամորրա»։ Տոմսակները վաճառւում են։

(252) 1—1

Յանկանում եմ խմբագիտի պաշտօն ունենալ։ Հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

(0) 5—1.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիս քաղաքի փողոցները կատարելագործուած եղանակով քարելու համար գրանիտի քարերի մատակարարումը յանձն առնել ցանկացող անձերին հրաւիրում է ներկայացնել մինչեւոյն տարուայ դեկտեմբերի 1-ի կէսօրուայ ժամը 12 ը փակ ծրարների մէջ իրենց մանրամասն յայտարարութիւններն այն պայմանների մասին, որոնցով նրանք կարող են յանձնել նիւթը մատակարարել քաղաքային վարչութեան կողմից ոստիկանական 8 րդ, 9-րդ և 10-րդ քաղաքամասերում նշանակուած տեղերը։ Առաջին մատակարարումը ոչ պակաս քան 500 քառ. սաժ. (200,000, հատ) պէտք է լինի առաջիկայ տարուայ մայիսի 1-ից ոչ ուշ։ Հետեւեալ մատակարարումների ժամանակամիջոցները պէտք է ցոյց տրուած լինին յայտարարութիւնների մէջ. ընդսմին մինչև առաջիկայ տարուայ հոկտեմբերի 1-ը պէտք է պատրաստ լինի 1500 քառ. սաժ (600,000) հատ քար։ Լինելիք մատակարարումների ընդհանուր և տեխնիքական պայմանները, նմանապէս և դրանց վերաբերեալ միւս տեղեկութիւնները կարող են ստացուել շինարարական բաժանմունքում և փողոցները քարելու համար կազմուած յանձնաժողովի դիւանատունն ամեն լի օր առ. ժամը 10-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները կընդունուեն բացառապէս գրաւոր, փակ ծրարների մէջ, որոնց վրայ պէտք է մակագրուած լինի՝ «Къ конкуренціи на поставку матеріаловъ для новаго мощенія г. Тифлиса». Յայտարարութիւնների մէջ պէտք է մանրամասնօրէն ցոյց տրուած լինի՝ 1) գրանիտի քարը կարելու տեղը և քարի տեսակը, 2) 1000 հատ քարի գինը մատակարարումով հանդերձ։ Այն կապալառուները, որոնց կյանձնուեն մատակարարումները, պարտաւոր են այդ մասին իրենց տրուած յայտարարումից յետոյ 15 օրուայ ընթացքում գրաւական ներկայացնել, ուսոի յայտարարութեան մէջ պէտք է ցոյց տրուած լինի գրաւականի քանակը, որը կպահուի իբրև ապահովութիւն մատակարարումները ճշտիւ կատարելու համար։

(330) 3—3

Открыта подписка на празднующую въ 1094 г. свой десятилѣтній юбилей
Всеобщую маленькую газету

2р. за годъ **С-ПЕТЕРБУРГЪ** За 3 мѣс. **50к.**

Газета безцензурная. —Изданія годъ одинадцатый

Содержаніе газеты: придворныя, правительственныя, политическій и общественныя новости и руководящія къ нимъ статьи; хроника происшествій и уголовныхъ дѣлъ, новости научныя, историческія. медицинскія. о воспитаніи, о загадочныхъ явленіяхъ и пр.; романы, стихи, замѣтки о спортѣ. театрахъ. новыхъ книгахъ пр.

Въ теченіе 1904 г. будутъ помѣщены: романъ изъ современ. русской жизни «Три товарища» соч. А. Молчанова и переводъ лучшаго изъ новѣйшихъ германскихъ романовъ подъ заглавіемъ „Насущный хлѣбъ“.

Въ теченіе года болѣе сотни портретовъ современныхъ дѣятелей и рисунковъ текущихъ событій.

Подписная цѣна съ дост. и пересылкой | за годъ **2 р.** | за пол. года. **1 р.** | за 3 мѣс. **50 к.**

Марками на 20 к. дороже. Газета выходитъ три раза въ недѣлю.

Адресъ Типографіи, Редакціи и Конторы: С.-Петербургъ, Невскій, 139.

Редакторъ-Издатель А. Молчановъ. 3—3

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ

Գ. Ի. ՊԱՎԼԻՋԵՆԻ

ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,
ՈՐՓԻԻ ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,
ԿՈՂԵԼԵԻ ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, Դալաչինսկիյ պրոսպ., տ. Մանթաշեանի, Բագու, Օլգինսկայա փող., տ. քաղաքային վարչութեան։ պօստի, գրելու, դրքերի, ալբոմների, տպագրական, լրագրական, մունչուտկի փաթաթելու թղթեր, մատիաններ, ծրարներ, գրելու և դիւանական պարագաներ։ Տելեֆոն 67. (149) 24—24

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ Յ. ՂԱՐԱԳԵՈՉԵՆԻ

Վարժարանը բաղկացած է երկու դասարաններից։ Աշակերտները պատրաստւում են բոլոր միջնակարգ դպրոցները մտնելու համար։ Նրանք ընդունւում են իբրև երթեկիկ, ցերեկօթիկ և դիշերօթիկ աշակերտներ։ Դպրոցում ընդունւում են նաև իբրև դիշերօթիկներ բոլոր կառաւարչական դպրոնների աշակերտներ իրենց դասերը վերարկնելով հանդերձ (съ репетиціей). Նա մանաւանդ նրանք որոնք թոյլ են լուսաւորչական հրօնից և հայ լեզուից։ Վարժարանում աւանդւում են բացի ամեն առարկաներից, նաև հայոց հրօն, հայոց լեզու, ֆրանսիական և գերմանական լեզուներ հմուտ ուսուցիչների ղեկավարութեամբ, իսկ առաջին նախակրթարանում հրօնին կից նաև բարոյախօսութիւն մանուկների համար։ Վարձը չափաւոր է։ Հասցէն։ Тифлисъ, Сололаки, Бебутовская ул. № 54 д. Саакова.

Վարժարանի կառավարիչ Յ. Ղարագեօզեան։

Рейнскіе **Буккеты**

№4711

О-ДЕ-КОЛЬ

Фирменный

Самый тонкій и стойкій ароматъ.

Предохраняетъ отъ заразныхъ заболѣваній.

„ԱՐՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ“

1903—1904

Կիսամեայ նկարազարդ հանդէս 4—6 նկարազարդ գրքոյկներով

Տարեկան բաժանորդագրին է գրքոյկների հետ միասին

Ռուսիայում . . . . . 2 ր. 50 կ.
Արտասահմանում . . . . . 10 ֆր. կամ 4 բուբ.

Կարելի է վճարել նաև մաս մաս առաջին կիսամեակին 1 ր. 50 կ., երկրորդին —1 ր.։ Երկրորդ կիսամեակի վճարը պէտք է ուղարկուի մինչև յունուարի մէկը։ Հոկտեմբերի մէկից մինչև յունուարի մէկը 1904 թ. առաջին յայտնուած գրքոյկի հետ արժէ 75 կոպ.

Հատով ծախւում է 15 կ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում հասցէն Тифлисъ, Редакція «Арогджапаик терт».

Адресъ редакціи Tiflis, Rédaction dela revue «Aroqdjapahik tert». (Ф.) 3—3

Открыта подписка на 1904 годъ
на ежедневную политическую литературную и экономическую газету

„НОВОСТИ“

съ 100 приложеніями.

подписная цѣна:

1-го (большого) изданія для городскихъ подписчиковъ:
на годъ 11 м. 10 м. 9 м. 8 м. 7 м.
р. к. р. к. р. к. р. к. р. к.
16 — 15 — 13 50 12 — 11 — 10 —
6 м. 5 м. 4 м. 3 м. 2 м. 1 м.
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.
9 — 7 50 5 80 4 50 3 30 1 80

для иногороднихъ подписчиковъ:
на годъ 11 м. 10 м. 9 м. 8 м. 7 м.
р. к. р. к. р. к. р. к. р. к.
17—15 50 14 50 13 50 12 50 11 30
6 м. 5 м. 4 м. 3 м. 2 м. 1 м.
р. к. р. к. р. к. р. к. р. к. р. к.
10 — 8 50 7 — 5 50 4 — 2 —

II-го (малаго) изданія для городскихъ подписчиковъ

5 рублей на 12 мѣсяцевъ, 2 р. 50 к. на 6 мѣс 1 р. 25 к. на 3 мѣс. и 50 коп. на 1 мѣс.

для иногороднихъ подписчиковъ:

6 рублей на 12 мѣсяцевъ, 3 р. на 6 мѣс., 1 р. 50 к. на 3 мѣс. и 55 к. на 1 мѣс.

пониженіе подписной цѣны второго изданія газеты „Новости“
(для городскихъ подписчиковъ 5 р. вмѣсто 10 р. для иногороднихъ 6 р. вмѣсто 11 р.)
вызвало въ 1904 году Громадное распространеніе ея

100 БЕЗПЛАТНЫХЪ ПРИЛОЖЕНІЙ 100

а именно:

52 №№	**Петербургская жизнь** Еженедѣльный иллюстрированный художественный литературный журналъ Отдѣльная подписная цѣна журнала: безъ доставки и пересылки: на 1 годъ—5 р., на 6 м.—3 р., на 3 м.—1 р., 75 к. Съ доставкою и пересылкою: на 1 годъ—6 р., на 6 м.—3 р., на 2 м.—1 р.	52 №№
12 №№	ЭСКУЛАПЪ Медико-Гигіеническое Обозрѣніе	12 №№
12 №№	**Техническое Обозрѣніе.** (Новѣйшія открытія и изобрѣтенія, успѣхи промышленности и торговли въ связи съ успѣхами наукъ, просвѣщенія и техника).	12 №№
12 №№	**„Природа и Хозяйство“** (Естественныя науки. селское хозяйство, садоводство и. т. п.).	12 №№
12 №№	**Новѣйшія Моды и Спортъ**	12 №№

ОКОЛО 2,000 ИЛЛЮСТРАЦІЙ

Обширный матеріалъ по Гигіенѣ и медицинѣ, домоводству, сельскому хозяйству, техникѣ и, вообще, для цѣлей самообразованія.
Контора газеты «НОВОСТИ», СПБ., Невскій пр., 18 Телефонъ 737.

При ковторѣ газеты «Новости» существуетъ **Книжный Магазинъ**
услугами котораго подписчики „Новостей“ пользуются на льготныхъ условіяхъ.
4—2 (◆.)

Այս գեղը վաճառել թոյլ է տրուած Վարշաւի բժշկական վարչութեան կողմից առաջին ընդհանուր հիմունքներով։

ԵՍ ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱԳ

ամենքին եմ իմ անսովոր երկան (185 սանտիմետր երկայնութեամբ) մազերը, որոնք յիշեցնում են Լորելէյի մազերը,—չնորհիւ իմ հնարած առանձին օծանելիքի 14 ամսուայ գրքաժուռեանս։ Այս օծանելիքը ճանաչուած է իբրև մազերը թափուելու դէմ մի լաւ միջոց, որը միևնոյն ժամանակ նպաստում է մազերի աճմանը և նրանց արմատների պնդանալուն այս օծանելիքի չնորհիւ տղամարդու մորուքը խիստ առատ կերպով աճում է, նմանապէս (մինչև անգամ կարճատև գործածութիւնից յետոյ) գլխի և մրուքի մազերը բնական փայլ են ստանում. ընդսմին օծանելիքը մազերը պահպանում է վաղաժամ մազերը ալեւորակելուց ձեր հատակում։

ՄԻ ԲԱՆԿԱՑԻ ԴԻՆԸ

3, 5 եւ 8. րուբլի

Հասանելիք փողն ստացուած ժամանակ ու դարկում է պոստով ամեն օր աշխարհի ամեն կողմերը ուղղակի գործատուից. ուղղուեն բոլոր պահանջները։

ANNA CSILLAC
Wien I Graben 14

82) 56—29

Дозв. Цензурою 17-гоНоября 1903г. Վերէիչն և Կամերմախերը Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр.Телеф.№852